«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ժամանակակից Օլիմպիական խաղեր
ԱՌԱՐԿԱ	Ֆիզկուլտուրա
ՀԵՂԻՆԱԿ	Այվազյան Վրույր Վահանի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ	«Հայաստանի Հանրապետության
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գեղարքունիքի մարզի Սևանի Յակով Զորաբյանի անվան հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ժամանակակից Օլիմպիական խաղերը, Օլիմպիական խաղերի ծագումը,
Անտիկ Օլիմպիական խաղերը, Ներածություն,
Պատմական ակնարկ ----------3
Ժամանակակից օլիմպիական խաղերը ---------- 6
Ժամանակակից Օլիմպիական խաղերի վերածնունդը ---------- 6
Օլիմպիական հնագույն պեղումները ---------- 7
Փոփոխությունները ---------- 8
Ձմեռային Օլիմպիական խաղերը ---------- 9
Օլիմպիական խաղերը և այլ տեղեկություններ ---------- 10
Ծանոթություն – ----------12
Օլիմպիական դրոշը և նշանաբառը – ----------12
Օլիմպիական խորհրդանիշներ ---------- 14
Նպատակը ---------- 14
Օրհներգ ---------- 15
Երդում ---------- 15
Նշանաբառ և կարգախոս ---------- 15
Մեդալներ ---------- 16
Օլիմպիական կրակ ---------- 17
Հրավառություն----------18
Թալիսմաններ---------- 18
Խաղերի էմբլեմա ---------- 18
Հայերի մասնակցությունը ---------- 19
Օգտագործված գրականության ցանկ ---------- 25
Եզրակացություն - ----------26

Ժամանակակից Օլիմպիական խաղերը

Օլիմպիական խաղերի ծագումը

Անտիկ Օլիմպիական խաղերը

Ներածություն

Պատմական ակնարկ

Հերակլեսի հայտնի քաջագործություններից էր Ավգեան ախոռների մաքրումը: Օլիմպիա քաղաքի Ավգեոս արքան եզների մեծ նախիր ուներ: Դրանց ախոռները երբեք չէին մաքրվել: Նրան, ով մեկ օրում կկարողանար մաքրել ախոռները, Ավեգոսը խոստացել էր տալ իր նախիրի կեսը:

Հերակլեսը, մոտակա երկու գետերի ջրերը շրջելով դեպի ախոռները, մեկ օրում մաքրեց այն: Բայց Ավեգոսն իր խոստումը չկատարեց:

Մեծ հերոսը՝ Հերակլեսը, ահավոր կերպով վրեժխնդիր եղավ Էլիսի արքայից: Մի քանի տարի անց, ազատագրվելով Էվրիսթևսի ծառայությունից, Հերակլեսը մեծ զորաբանակով խուժեց Էլիս, արյունահեղ ճակատամարտում հաղթեց Ավգիասին և սպանեց նրան իր մահաբեր նետով: Հաղթանակ տանելուց հետո Հերակլեսը հավաքեց զորաբանակը և ամբողջ ավարը Պիսայի մոտ, իբրև զոհ մատուցեց Օլիմպիական աստվածներին և հիմնեց Օլիմպիական խաղերը

Անտիկ օլիմպիական խաղերը կրոնական ու մարմնամարզական փառատոններ էին, որոնք անցկացվում էին ամեն չորս տարին մեկ՝ Հին Հունաստանի Օլիմպիա բնակավայրում՝ Զևսին նվիրված սրբավայրում: Օլիմպիական խաղերը անց էին կացվում սրբազան մի հարթավայրում, ուր ինքը՝ Հերակլեսը, Աթենաս Պալաս դիցուհուն նվիրված ձիթենիներ էր տնկել:

Ավանդության համաձայն՝ օլիմպիական խաղերը սահմանել էր Հերակլեսն՝ ի փառս Օլիմպիական աստվածների՝ մ.թ.ա. /ք.ա./ VIII դարում՝ 776 թվականին: Օլիմպիադաներն անց էին կացվում Պելեպոնեսի Օլիմպիա քաղաքում:

Կրոնական ծեսերի ժամանակ աստվածերի պատվին սովորաբար կազմակերպվում էին մրցումներ և ներկայացումներ: Սակայն կային մարտական մարզաձևեր, ինչպիսիք էին՝ ըմբշամարտը, պանեկրատիոնը, ձիավարություն ու կառք վարելու մրցությունները: Դարերի ընթացքում այդ տոնակատարություններից առանձնացան սպորտային խաղերը, արվեստի մրցույթներն ու թատրոնը:

Ամենահայտնի համահունական սպորտային մրցույթներն Օլիմպիական խաղերն էին:

Հայտնի էր, որ Օլիմպիական խաղերի ընթացում մասնակից քաղաք-պետությունների միջև եղած բոլոր կոնֆլիկտները դադարեցվել են մինչև խաղերի ավարտը: Ռազմական գործողությունների նմանատիպ դադարեցումը հայտնի էր որպես Օլիմպիական խաղաղություն կամ զինադադար:

Հունաստանի պոլիսները խաղերին մասնակցելու էին ուղարկու իրենց լավագույն մարզիկներին: Խաղերից մի քանի ամիս առաջ բովանդակ Հունաստանում և հունական քաղաքներում ուղարկվում էին օլիմպիական խաղերին հրավիրող մունետիկներ:

Խաղերը տեղի էին ունենում հուլիս ամսին, և բացումը խորհրդանշվում էր Զևսի տաճարի մոտ վառվող Օլիմպիական կրակով:

Զևսի տաճարը ուներ 22 մետր բարձրություն, 27 մետր լայնություն և 64 մետր երկարություն, իսկ արձանը պատրաստված էր փղոսկրից և ոսկուց:

Օլիմպիադաներին կարող էին մասնակցել միայն ազատ հույն տղամարդիկ: Կանանց արգելվում էր նույնիսկ մրցույթները դիտել: Հետագայում կանանց հաար,

խաղերի ավարտից հետո անցկացվում էին մրցումներ Հերա աստվածուհու պատվին: Առաջինը կանանցից օլիմպիական խաղերի չեմպիոն կոչման է արժանացել Կինսկան Սպարտայի թագավորների դուստրը և քույրը՝ 96-րդ օլիմպիական խաղերում:

Ըստ ավանդության՝ առաջին օլիմպիական չեմպիոնը եղել է Կորբեոսը /Կորեբո Եղիոնաացու/, որը համարվում է առաջին օլիմպիական խաղերի չեմպիոն /մ.թ.ա. /ք.ա./ VIII դար 776թվական/՝ Ստադիո դրոմ կոչվող մարազձնից: Վազքի երկարությունը կազում էր 192,27 մետր, որը հավասար էր ստադիոնի երկարությանը:

Կորեբոն խոհարար էր Էլիս քաղաքից:

Մրցումների հաղթողները պարգևատրվել են արմավենու ճյուղով հյուսված դափնեպսակով, փառաբանվել են, նրանց պատվին ստեղծվել են բանաստեղծություններ ու կանգնեցվել արձաններ: Խաղերն անցկացվել են ամեն չորս տարին մեկ և այդ ժամանակաշրջանը, որ հայտնի է որպես Օլիմպիադա, հույներն օգտագործել են որպես ժամանակի չափման միավոր:

Հայտնի է, որ Հին Հայաստանում անցկացվել են Նավասարդյան խաղեր և, որ Օլիմպիոսի /Հունաստանի/ խաղերին մասնակցած առաջին հայը եղել է Տրդատ I թագավորը, որը ասվելի քան 2000 տարի առաջ հանդես է եկել քառաձի մառտակարգ վազքերում:

Հայ ազգի Օլիմպիական խաղերի չեմպիոններ են դարձել Տրդատ 3-րդ /Տրդատ Մեծ/ Արշակունի թագավորը /ըմբշամարտ// մ.թ.ա. 3-րդ դար 281թ. 265-րդ օլիմպիական խաղեր, որն էլ մասնակցել է Հռոմի կողմից:

Վարազդատ Արշակունի թագավորը Արտաշատից /մ.թ. IV դար 385թ. /383թ./ 291-րդ/ օլիմպիական խաղեր բռնցքամարտ /Կռփամարտ/, որն էլ առաջին անգամ ներկայացրեց Հայաստանը:



Մ.թ.ա. /ք.ա./ VI դար 540 թվականից սկսած օլիմպիական խաղերի հաղթողների արձանները սկսեցին տեղադրել հենց Օլիմպիոսում /Հունաստան/:

Տարիների ընթացքում այստեղ տեղադրվեց մոտ 3000 արձան: Դա տարբեր օլիմպիադաներում առաջնության դափնիների արժանացած մարզկների արձանների յուրատեսակ ցուցահանդես էր:

Օլիմպիական խաղերն իրենց գագաթնակետին են հասել մ.թ.ա. /ք.ա./ 6-5-րդ դարերում, սակայն հետո դրանց նշանակությունն աստիճանաբար նվազել է Հունաստանում Հռոմեական իշխանության ու ազդեցության տարածմանը զուգահեռ: Թեև գիտական որևէ հստակ եզրահանգում չկա այն մասին, թե երբ է պաշտոնապես դադարեցվել Անտիկ Օլիմպիական խաղերի անցկացումը, ամենատարածված տարեթիվը մ.թ. IV դար 393 /394/ թվականն է, երբ Թեոդոսիոս I կայսրը /Թեոդիոս/ հրամայել է, որ հեթանոսական բոլոր պաշտամունքներն ու ծեսերը վերացվեն: Նշվում է նաև մ.թ. V դար 426 թվականը, երբ Թեոդոսիոս II-ը /Թեոդիոս/ հրամայել է ոչնչացնել հունական բոլոր տաճարները: Հին Հունական օլիմպիական խաղերը մոռացության մատնվեցին:

Ժամանակակից օլիմպիական խաղեր

Ժամանակակից շրջանում անցկացվող մարզական միջոցառումների վերաբերյալ «Օլիմպիական» բառի կիրառման բազմաթիվ դեպքեր փաստաթղթերում հանդիպում են 17-րդ դարից սկսած: Առաջին այդպիսի դեպքերը եղել են «Կոտսուոլդի խաղերը» կամ «Կոլտսուոլդի Օլիմպիական խաղերը», որ ամեն տարի անցկացվել են Անգլիայի Չիփինգ Չեմփդեն քաղաքի մոտ և ներառել են մրցումներ տարբեր մարզաձևերից: Դրանք առաջին անգամ կազմակերպել են փաստաբան Ռոբերտ Դովերի կողմից և անցկացվել են 1612-1642 թվականներին:

Հեղափոխական Ֆրանսիայում 1796 թվականին անցկացված L'Olympiade de la Republigue ամենամյա ազգային օլիմպիական փառատոնների ժամանակ նույնպես փորձ է արվել պահպանել Հին Հունաստանում անցկացված Օլիմպիական խաղերի ավանդույթները:

Ժամանակակից Օլիմպիական խաղերի վերածնունդը

Օլիմպիական խաղերի վերսկսման հարցի վերաբերյալ Հունաստանն սկսել է հետաքրքրություն ցուցաբերել 1821 թվականին Օսմանյան Կայսրության դեմ մղված անկախության պատերազմի ժամանակ՝ խմբագիր Պանայոտիս Սուցոսը 1833 թվականին հրապարակած իր «Մեռածների երկխոսություն» բանաստեղծության մեջ:

Հունահռոմեական հարուստ մարդասեր Եվանգելիս Զապասը նախ 1856 թվականին գրել է Հունաստանի թագավոր Օտտոն 1-ին՝ առաջարկելով ֆինանսավորել Օլիմպիական խաղերի վերջնական վերսկսումը: Զապասը հովանավորել է 1859 թվականին անցկացված առաջին Օլիմպիական խաղերը, որ տեղի են ունեցել Աթենքի հրապարակում: Մասնակցել են մարզիկներ Հունաստանից և Օսմանյան կայսրությունից: Զապասը ֆինանսվարել է նաև հնագույն Պանաթենաիկ մարզադաշտը, որպեսզի այն կարողանա հյուրընկալել ապագայում անցկացվելիք բոլոր Օլիմպիական խաղերը:

Մարզադաշտը հյուրընկալել է Օլիմպիական խաղերը 1870 և1875 թվականներին: 1870 թվականին խաղերը դիտել է երեսուն հազար հանդիսատես, իսկ 1875 թվականին խաղերի հանդիսատեսի վերաբերյալ պաշտոնական տվյալներ չկան:

Օլիմպիական հնագույն պեղումները

Հին Հունական Օլիմպիական խաղերի գաղափաների լայն տարածման համար՝ իբրև երիտասարդության ֆիզիկական դաստիարակության մոդելի, նպաստեցին հին Օլիմպիայի հնագիտական պեղումների արդյունքները: Առաջին պեղումները Օլիմպիայում անցկացվեցին Ֆրանսիայի հնագետները 1831-1834 թվականներին՝ Հունաստանի անկախությունը ձեռք բերելուց հետո: Այնուհետև դրանք վերսկսեցին 1875 թվականին: Արշավախումբը ղեկավարեց Գերմանիայի հնագետ Էռնեստ Կուրցիուսը:

Հնագետները ընդերքից դուրս հանեցին 130 արձաններ, մոտ 13 հազար արծաթե, ոսկե և բրոնզե իրեր, հայտնաբերեցին ավելի քանի 10 հազար մակագրություններ:

Օլիմպիական հնագիտական պեղումների մասին հաղորդումները աշխարհում առաջացրեցին մեծ հետաքրքրություն, նպաստեցին սպորտի մասսայականացմանը և օլիմպիական գաղափարների տարածմանը:

19-րդ դարում, գլխավրապես 1875-1881 թվականներին, Օլիմպիայի վայրում կատարված պեղումներն են միայն, որ մեզ հնարավորություն են տվել ստույգ պատկերացում կազմել երփեմնի և օլիմպիական խաղերի մասին:

Ժամանակակից Օլիմպիական շարժման հիմնադիր, ֆրանսիացի գիտնական Բարոն Պիեռ դե Կուբերտենը նեշել է, որ ֆիզկուլտուրան և սպորտը պետք է մարդուն մղեն ֆիզիկական կատարելության, ինչպես նաև դպրոցականների դաստիարակմանը, անձի ներդաշնակ զարգացմանը: Սպորտը մարդուն տալիս է զարգացման օժանդակում, շարժողական ընդունակությունների մշակում, առողջ ապրելակերպ կենցաղում: Սպորտը կարևոր տեղ է գրավում մատաղ սերնդի դաստիարակման համակարգում:

Սպորտը մեզ տալիս է ուժ, առողջություն՝ իզուր չի ասված . «Առողջ մարմնի մեջ առողջ հոգի»: /Ռեֆլեր/

19-րդ դարի 90-ական թվականները համաշխարհային մարզական հանրության համար նշանավորվեց ակնառու իրադարձություններով: 1890 թվականներին Ունելոքի օլիմպիական կազմակերպության անցկացված Օլիմպիական խաղերին

ներկա գտնվելուց հետո, Բարոն Պիեռ Դը Կուբերտերը որոշել է ստեղծել Միջազգային Օլիմպիական կոմիտեն /ՄՕԿ/: Կուբերտերը, հիմնվելով Բրուքսի և Զապասի գաղափարների ու աշխատանքի վրա, մտադրվել է հիմնադրել միջազգային մակարդակի Օլիմպիական խաղեր, որ կանցկացվեն ամեն չորս տարին մեկ:

1894 թվականին հունիսի 16-23-ին Ֆրանսիայում՝ Փարիզի Սորբոնի համալսարանում, Ֆրանսիայի հասարակական գործիչ և գիտնական Բարոն Պիեռ Դե Կուբերտենի առաջարկությամբ հիմնադրվեց Միջազգային Օլիմպիական Կոմիտեն /ՄՕԿ/:

Նա այդ գաղափարները ուղարկել է նորաստեղծ Միջազգային օլիմպիական կոմիտեի առաջին Օլիմպիական համագումարում, որ անցկացվել է 1894 թվականի հունիսի 16-23-ին Փարիզի Սորբոնի համալսարանում:



Համագումարի վերջին օրը որոշվել է, որ Միջազգային Օլիմպիական Կոմիտեի հովանու ներքո անցկացվող առաջին Օլիմպիական խաղերը տեղի կունենան Հունաստանի մայրաքաղաք Աթենքում՝ 1896 թվականի ապրիլի 6-15-ը: ՄՕԿ-ի առաջին նախագահ է ընտրվել հույն բանաստեղծ Դեմետրիոս Վիկելասը:

Փոփոխությունները

1896 թվականին ունեցած հաջողությունից հետո Օլիմպիական խաղերը հայտնվել են լճացման մեջ, ինչն սպառնում էր դրանց գոյությանը: 1900 թվկանի օլիմպիական խաղերն անցկացվել են Փարիզում և կազմել Համաշխարհային ցուցահանդեսի մաս: 1904 թվականին Սենթ Լուիսում անցկացված Օլիմպիական խաղերը նույնպես կազմակերպվել են Համաշխարհային ցուցահանդեսի շրջանակներում, և երկուսն էլ ավելի շատ նման են եղել շոուի: Փարիզի Օլիմպիական խաղերը չեն ունեցել մարզադաշտ, սակայն դրանք նշանավոր են

նրանով, որ դրանց առաջին անգամ մասնակցել են նաև կանայք: Սենթ Լյուիսի Օլիմպիական խաղերին մասնակցել է շուրջ 650 մարզիկ, սակայն դրանցից 580-ը եղել է Միացյալ Նահանգներից: Այդ խաղերը եղել են Օլիմպիական շարժման նվազագույն մակարդակը: Օլիմպիական խաղերի համբավը կրկին վերականգնվել է այն բանից հետո, երբ 1904 թվականին՝ Աթենքում, անցկացվել են արտահերթ Օլիմպիական խաղեր /անգլ. Intercalated Games/, այդպես են կոչվել, որովհետև եղել են երրորդ Օլիմպիադայի շրջանակներում անցկացվող երկրորդ խաղերը/: Այդ խաղերը չեն ճանաչվել ՄՕԿ-ի կողմից, և հետագայում նման խաղերը այլևս չեն անցկացվել: Արտահերթ Օլիմպիական խաղերը, որոնց մասնակցել են բազմաթիվ մարզիկներ աշխարհի տարբեր երկրներից, արժանացել են միջազգային ուշադրության: Դա նպաստել է Օլիմպիական խաղերի ժողովրդականության ու նրա մաշտաբների մեծացմանը:

Ձմեռային Օլիմպիական խաղեր

Ձմեռային Օլիմպիական խաղերն ստեղծվել են սառույցի և ձյան վրա անցկացված մարզաձևերի համար, որոնց մրցումները տրամաբանական տեսանկյունից անհնար էր անցկացնել ամառային Օլիմպիական խաղերի ընթացքում: Այնուամենայնիվ, գեղասահքը /1908 և 1920 թվականներ/ և տափօղակով հոկեյը /1920 թվականին/ ներառվել են Ամառային Օլիմպիական խաղերի մարզաձևերի շարքում: ՄՕԿ-ը ցանկանում էր ընդլայնել դրանց ցանկը՝ ներառելով ձմեռային այլ մարզաձևեր: 1921 թվականին Լոզանում անցկացված Օլիմպիական համագումարում որոշվել է անցկացնել Օլիմպիական խաղերի ձմեռային տարբերակը: 1924 թվականին Ֆրանսիայի Շաամունի քաղաքում անցկացվել է ձմեռային մարզաձևերի շաբաթ /իրականում այն տևել է 11 օր/՝ կապված Փարիզի Օլիմպիական խաղերի հետ, որ անցկացվել են երեք ամիս անց: Այդ իրադարձությունն էլ հայտնի է որպես առաջին Ձմեռային օլիմպիական խաղեր, որոնք էլ անվանում են «Սպիտակ օլիմպիադաներ»: Չնայած սկզբում նախատեսված էր, որ Ամառային և Ձմեռային օլիմպիական խաղերը կհյուրընկալեն նույն երկիրը մեկ տարվա ընթացքում, սակայն շուտով այդ պրակտիկան դարեցվել է ՄՕԿ-ը որոշել է, որ Ձմեռային օլիմպիական խաղերը պետք է անցկացվեն ամեն չորս տարին մեկ՝ այն նույն տարում, ինչ Ամառային

օլիմպիական խաղերը: Այդ ավանդույթը պահպանվել է մինչև 1992 թվականը, երբ Ձմեռային Օլիմպիական խաղերն անցկացվել են Ֆրանսիայի Աբերվիլ քաղաքում Դրանից հետո, սկսած 1994 թվականից, Ձմեռային Օլիմպիական խաղերն անցկացվել են ամեն չորս տարին մեկ, սակայան արդեն Ամառային Օլիմպիական խաղերից երկու տարի անց:

Օլիմպիական խաղերը և այլ տեղեկություններ

Ժամանակակից Օլիմպիական խաղերը կամ Օլիմպիադաները /անգլ. Olympic Games, Olympics, ֆր.՝ Jeux olympiques/, Խոշորագույն միջազգային մարզական իրադարձություն, ամառային և ձմեռային մարզաձևերի մրցաշարեր, որոնց ընթացքում աշխարհի տարբեր երկրն եր ներկայացնող հազարավոր մարզիկներ մասնակցում են բազմատեսակ մրցույթների:

Օլիմպիական խաղերը համարվում են գլխավոր մարզական մրցությունն աշխարհում, ոնոց մասնակցում է ավելի քան 200 երկիր:

Օլիմպիական խաղերն անցկացվում են ամեն չորս տարին մեկ: Ամառային և Ձմեռային օլիմպիական խաղերն անցկացվում են հերթականությամբ՝ մեկը մյուսից հետո:

Օլիմիական խաղերի ստեղծումը ոգեշնչվել է անտիկ Օլիմպիական խաղերից, որոնք անցկացվում էին Հին Հունաստանի Օլիմպիա բնակավայրում՝ սկսած մ.թ.ա. /ք.ա./ 8-րդ դարից, սակայն արգելվել են մ.թ. 4-րդ դարում: Բարոն Պիեռ դը Կուբերտենի ջանքերով 1894 թվականին հիմնադրվել է Միջազգային Օլիմպիական կոմիտեն /ՄՕԿ/, որի գլխավորությամբ 1896 թվականին Աթենքում անցկացվել են ժամանակակից առաջին Օլիմպիական խաղերը:

ՄՕԿ-ն Օլիմպիական շարժման ղեկավար մարմինն է, որի կառուցվածքն ու լիազորությունները որոշվում են ըստ Օլիմպիական խարտիայի:

Խորհրդային Միությունը ներկայացվում էր մարզիկների թիմ, որոնք պաշտոնապես ուսանողներ, զինվորներ կամ բանվորներ էին, բայց իրականում նրանցից շատերին պետությունը վճարում էր իրենց ողջ ժամանակը մարզումներին տրամադրելու համար: Որպես արդյունք՝ Օլիմպիական ժխաղերին զուտ սիրողական մակարդակի մարզրիկների փոխարեն, ինչպես նախատեսել էր Կուբերտենը, սկսել են

մասնակցել պրոֆեսիոնալ մարզիկներ: Զանգվածային լրատվամիջոցների կողմից աճող կարևորությունն ստեղծել է Օլիմպիական խաղերի կորպորոտիվ հովանավորության ու առևտրային խնդիր: Համաշխարհային պատերազմի պատճառով չեղարկվել են 1916 թվականին 6-րդ, 1940 թվականի 12-րդ, և 1944 թվականին 13-րդ Օլիմպիական խաղերը, բայց համարակալվեցին:

Սառը պատերազմի տարիներին լայնածավալ բոյկոտումներրի արդյունքում սահմանափակվել է երկրներրի մասնակցությունը 1980 և 1984 թվականների Օլիմպիական խաղերին, սակայն վերջինին մասնակցել է 140 Օլիմպիական ազգային կոմիտե, ինչը ռեկորդ էր այդ ժամանակի համար:

Օլիմպիական շարժումը ներառում է Միջազգային մարզական միավորումները, Ազգային Օլիմպիական կոմիտեները /ԱՕԿ/ և կազմակերպում կոմիտեներ բոլոր Օլիմպիական խաղերի համար: Որպես որոշումներ ընդունող մարմին՝ ՄՕԿ-ը պատասխանատու է Օլիմպիական խաղերի մայրաքաղաքի ընտրության համար, ինչպես նաև կազմակերպում և ֆինանսավորում է Օլիմպիական խաղերը՝ համաձայն Օլիմպիական Խարտիայի: ՄՕԿ-ը նաև որոշում է օլիմպիական ծրագիրը, որը կազմված է այն մրցույթներից, որոնք պետք է անցկացվեն խաղերի ընթացքում: Կան օլիմպիական մի շարք արարողություններ ու խորհրդանշաններ, որոնցից են Օլիմպիական դրոշն ու ջահը, ինչպես նաև օլիմպիական խաղերի բացման ու փակման արարողությունները: ավելի քան 13 000 մարիկ է մասնակցում Ամառային և Ձմեռային օլիմպիական խաղերի ընթացքում անցկացվող 33 տարբեր մարզաձևերից անցկացվող շուրջ 400 մրցումների: Ամնեն մի մրցության արդյունքում առաջին, երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցրած մարզիկներն արժանանում են համապատասխանաբար ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների:

Ժամանակի ընթացքում Օլիմպիական խաղերին սկսել են մասկացել բոլոր պետությունները: Մասնակիցների թվաքանակի աճը հանգեցրել է մի շարք խնդիրների ու վեճերի, ներառյալ բոյկոտները, , խթանիչների օգտագործումը, կաշառակերությունը և ահաբեկչական հարձակումը 1972 թվականին: Ամեն երկու տարին մեկ անցկացվող Օլիմպիական խաղերը, մեծապես լուսաբանելով զանգվածային լրատվամիջոցների կողմից, անհայտ մարզիկներին հնարավորություն են տալիս ձեռք բերել ազգային, իսկ երբեմն նաև միջազգային ճանաչում:

Օլիմպիական խաղերը, դրանք ընդունող երկրներին ու քաղաքներին նաև հնարավորություն են տալիս ներկայանալ աշխարհին:

20-րդ և 21-րդ դարերի ընթացքում Օլիմպիական շարժումը զարգացում է ապրել, ինչը հանգեցրել է որոշակի փոփոխությունների Օլիմպիական խաղերում: Արդյունքում ստեղծվել են Ձմեռային Օլիմպիական խաղերը սառույցի վրա անցկացվող ու ձմեռային այլ մարզաձևերի համար, Պարալիմպիկ խաղերը՝ հաշմանդամություն ունեցող մարզիկների համար, ինչպես նաև Պատանեկան Օլիմպիական խաղերը՝ պատանի մարզիկների համար: Դեֆլիմպիկ և Հատուկ օլիմպիական խաղերը նույնպես հաստատվել են ՄՕԿ-ի կողմից: Վերջինս ժամանակի ընթացքում ստիպված է եղել հարմարվել կատարվող տնտեսական, քաղաքական ու տնտեսական փոփոխություններին:

Ծանոթություն

Օլիմպիական խաղերն ամեն անգամ հիշեցնում են Հին Հունաստանը: Եվ այդ է պատճառը, որ մրցումներին անմիջականորեն նախորդող ավանդական շքերթի ժամանակ առջևից քայլում են Հունաստանի մարզիկները՝ Օլիմպիական խաղերի հայրենիքի ներկայացուցիչները:

Օլիմպիական դրոշը և նշանաբանը

1914 թվականին Փարիզում կայացած ՄՕԿ-ի նստաշրջանը ընդունեց Օլիմպիական շարժման համար կազմակերպչական մեծ նշանակություն ունեցող մի քանի որոշումներ: Նստաշրջանը հաստատեց 5 օղակներով միահյուսված օլիմպիական դրոշը, ֆրանսերենը, անգլերենը և գերմաներենը դարձան ՄՕԿ-ի պաշտոնական լեզուն: Առաջին անգամ քննարկվեց միջազգային, ֆեդերացիաների հետ ՄՕԿ-ի փոխհարաբերությունների համար:

Օլիմպիական դրոշը առաջին անգամ բարձրացվեց 1920 թվականին՝ 7-րդ օլիմպիական խաղերի ժամանակ:

Օլիմպիական դրոշը ունի սպիտակ գույն, պատկերված է 5 միահյուսված օղակներով: Օլիմպիական օղակների 5 գույներն ու նշանակությունը՝

1. Կապույտ – Եվրոպա

/ջրային ռեսուրսներ Եվրոպայում շատ կան/

2. Սև - Աֆրիկա

/մեծամասնությունը սևամորթ են բնակվում Աֆրիկայում/

3. Կարմիր – Ամերիկա

/կարմիր պապուասներ, ինդեյեցներ Ամերիկայի նախկին բնակիչներն են/

4. Դեղին – Ասիա

/ավազի, անապատների շատ լինելը, դեղին ավազի գույնը/

5. Կանաչ – Ավստրալիա

/կանաչ դրախտային բնությունը/

Օլիմպիական դրոշի հեղինակն էր Պիեռ դե Կուբերդինը:

Օլիմպիական խաղերն ունեն նաև իրենց նշանաբանը՝ GITIUS, ALTIUS, FORTIUS: Նշանակում է արագ, բարձր, ուժեղ՝ GITIUS – արագ, ALTIUS - բարձր, FORTIUS – ուժեղ:

Օլիմպիական խորհրդանշաններ

Օլիմպիական խորհրդանշանները Օլիմպիական խաղերի ատրիբուտներից է, օգտագործվում է օլիմպիական կոմիտեյի կողմից նպաստելով աշխարհի Օլիմպիական շարժման գաղափարին: Օլիմպիական խորհրդանշաններն են՝ դրոշը /օղակներ/, օրհներգը, երդումը, կարգախոսը, մեդալները, էմբլեման: Օլիմպիական ցանկացած խորհրդանիշների օգտագործումը առևտրային նպատակներով արգելվում է Օլիմպիական խարտիայով, Օլիմպիական խարտիան փաստաթուղթ է, որում հիմնարար շարադրված է Օլիմպիական սկզբունքները, կանոնները, որը ընդունվել է ՄՕԿ-ի կողմից:

Նպատակ

Օլիմպիական խարտիան իրականացնում է երեք խնդիրներ.

- Փաստաթուղթ

Սահմանադրական բնույթի, որը իրականացնում է Օլիմպիզմի սկզբունքները և արժեքները.

- ՄՕԿ-ի կանոնադրությունը.
- Կանոնակարգ

Կանոնակարգի պարտականության բաժնում՝ Միջազգային օլիմպիական կոմիտեյի, միջազգային ֆեդերացիաներ, Ազգային Օլիմպիական կոմիտեների և Օլիմպիական խաղերի կազմկոմիտեյի միջև:

Դրոշ և խորհրդանիշ

Օլիմպիական դրոշը սպիտակ կտավ է, որի կենտրոնում ասեղնագործված է հինգ միահյուսված օլիմպիական խորհրդանիշ: Խորհրդանիշը ստեղծվել է 1912 թվականին հույն Անգելո Բոլանկի կողմից, ներկայացվել է Միջազգային Օլիմպիական Կոմիտեի կոնգրեսում՝ Փարիզում՝ 1914 թվականին, Պիեռ դը Կուբերտենի առաջարկությամբ:

Օլիմպիական խորհրդանիշը և Օլիմպիական դրոշը առաջին անգամ ներկայացվել է 1920 թվականին՝ Անտրվեպենի /Բելգիա/ ամառային օլիմպիական խաղերում:

Օլիմպիական շարժման դրոշը իրենից ներկայացնում է սպիտակ կտավ, որի կենտրոնում տեղադրված են երկու շարքով /երեքը՝ վերևում, իսկ երկուսը՝ ներքևում/, կապույտ, սև, կարմիր, դեղին և կանաչ:

Օղակները խորհրդանշում է աշխարհի հինգ մասերի միությունը /միասնություն/ Օլիմպիական խաղերի համաշխարհային կամքը:

Օղակները միացված են շղթայով ՝ W-ի ձևով, ընդ որում ծայրերի /կապույտ, կարմիր/ օղակներից յուրաքանչյուրը միահյուսված է մեկը մյուսին, իսկ կենտրոնում տեղադրված երկու օղակները նույնականացված են իրար:

Օղակները խորհրդանշում են հինգ մայրցամաքները: Սակայն, ի տարբերություն տարածված տարբերակի, օղակներից յուրաքանչյուրը չի պատկանում որևէ կոնկրետ մայրցամաքի: Վեց գույն /կտավի սպիտակ ֆոնի հետ միասին/ համակցված են, նրանք ներկայանում են աշխարհի բոլոր երկրների ազգային գույներն՝ առանց բացառության:

Օրհներգ

Օլիմպիական խաղերի օրհներգը կատարվում է այն ժամանակ, երբ բարձրացվում է օլիմպիական դրոշը՝ խաղերի բացման ժամանակ, ինչպես նաև խաղերի ավարտին, նաև որոշ դեպքերում: Օրհներգի հեղինակը հույն կոմպոզիտոր Սպիրոսոմ Ամարասոմն է:

Երդում

Հայտնի մարզիկներից մեկը արտասանում է երդումը՝ մասնակից մարզիկների անունից՝ ազնիվ մրցումներ անցկացնելու վերաբերյալ: Հետո մրցավարներից մեկը նույնպես արտասանում է երդումը արդար և օբյեկտիվ մրցավարության վերաբերյալ:

Այն առաջարկվել է Պիեռ դե Կուբերտենի կողմից՝ 1913 թվականին՝ Անտվերպենի /Բելգիա/ ամառային օլիմպիական խաղերում: Առաջին անգամ պաշտոնական հայտարարվեց 1920 թվականին՝ Անտվերպենի /Բելգիա/ ամառային օլիմպիական խաղերին:

Նշանաբան և կարգախոս

Օլիպիական խաղերի նշանաբան է՝ GITIUS, ALTIUS, FORTIUS, որը լատիներենից թարգմանվում է «Արագ, Բարձր, Ուժեղ»: Այն ստեղծվել է ֆրանսիայի

հոգևոր հովիվ Անրի Դիդոնի կողմից 1894 թվականի Միջազգային Օլիմպիական կոմիտեյի ստեղծման ժամանակ Պիեռ դե Կուբերտենը առաջարկեց այն ներկայացնել 1924 թվականի ամառային Օլիմպիական խաղերին՝ Փարիզ-Ֆրանսիա:

Գոյություն ունի կարգախոս՝ «Գլխավորը ոչ թե հաղթանակն է, այլ մասնակցությունը» հեղինակությունը վերնագրվում է Պիեռ դե Կուբերտենին: Այս արտահայտությունը վերաբերվում է վազող Պիետրի Դորանդեմի ողբերգությանը, որը որակազրկվել էր /Լոնդոն 1908/ մարաթոնյան վազքի ժամանկ:

Մեդալներ

Օլիմպիական մեդալներով՝ ոսկի, արծաթ, և բրոնզ, պարգևատրվում են լավագույն արդյունքները մրցումներում: Իսկ թիմային մարզաձևերում մեդալներ ստանում են թիմի բոլոր մարզիկները:

Մեդալի դիզայնը, որով պարգևատրվում էին մարզիկներին առաջին ութ ամառային Օլիմպիական խաղերում, այն բավական տարբերվում էր, և մշակվել է ինքնուրույն՝ յուրաքանչյուր Կազմկոմիտեյի կողմից: 1920 թվականի մինչև 2000 թվականը օլիմպիական մեդալների երեսին օգտագործվել է ստանդարտ դիզայն. Նիկե աստվածուհին աջ ձեռքին արմավենու ճյուղ բռնած՝ մեծարելով հաղթողին: Իսկ մեդալի հակառակ երեսին պատկերը փոխվում էր՝ կախված տվյալ երկրի ցանկություններից, որտեղ անցկացվում էր խաղերը: Սկսած 2004 թվականից, այդ սովորությունը նահանջ է ապրել, և մեդալի երկու երեսն էլ պատրաստված է դիզայներական յուրահատուկ ձևով՝ խաղերի կազմակերպիչների կողմից:

2008 թվականի խաղերի մեդալի տրամագիծը 70 միլիմետր էր, իսկ հաստությունը՝ 6 միլիմետր: Ոսկե մեդալը, որպես կանոն, պատրաստվում է հիմնականում արծաթից: Այդպիսով 2008 թվականի խաղերի ժամանակ մեդալը կշռում էր մոտ 150 գրամ, որը բաղկացած էր մոտավորապես 6 գրամ ոսկուց: Արծաթե մեդալները պատրաստված են արծաթից, իսկ բրոնզը՝ պղնձից:

1896 և 1900 թվականների խաղերում մեդալներ են շնորհվել միայն առաջին և երկրորդ տեղերը զբաղեցնող մարզիկներին: Այն ժամանակ ոսկե մեդալներ չեն եղել: Մարզիկները պարգևատրվում էին միայն արծաթե և բրոնզե մեդալներով:

Օլիմպիական կրակ /ջահ/

Օլիմպիական խաղերը սկսելուց առաջ, ի հիշատակ անտիկ ժամանակների օլիմպիադաների, հերթական օլիմպիական խաղերի բացումից մի քանի ամիս առաջ Հունաստանում՝ աստվածուհի Հերայի քանդված տաճարում, որը գտնվում է Օլիմպիա բնակավայրում, /քաղաքում/ մեկնարկվում է կրակի էստաֆետը: Կրակը ստանում են բնական ճանապարհով՝ արև ճառագայթների և պարաբոլուդների հայելիներով:

Ամեն անգամ այդ մեծ ասպարեզի նախորյակին, բոլորի հայացքի առջև Օլիմպիոսն է՝ խաղերի հայրենիքը /ծննդավայրը/ որտեղ արևի ճառագայթների և խոշորացույցի միջոցով վառվում է օլիմպիական ջահը:

Կրակով ջահը փոխանցվում է մեկ աթլետից մյուսին բազմօրյա սիմվոլիկ էստաֆետային միջոցով, որը անցնում է 5 մայրցամաքների բնակավայրում: Կրակը հասնում է օլիմպիական մրցավայր, որտեղ պետք է անցկացվի Օլիմպիական խաղերի բացման արարողությունը՝ որպես մարզական թեժ մրցամարտի և անկեղծ բարեկամության վրա:

1928 թվականին Նիդերլանդների Ամստերդամ քաղաքում 9-րդ օլիմպիական խաղերի ժամանակ ծնունդ առավ մի ավանդույթ, որը հետագայում չխախտվեց: Դա օլիմպիական կրակի ավանդույթն է:

Դափնու ճյուղ

Դափնու ճյուղ կամ «Kotinos» իրենից ներկայացնում է փաթաթված ծաղկեպսակ ճյուղերով, որով պարգևատրվում են հաղթանակած մարզիկին ոսկե մեդալի հետ իասին:

Ծաղկեպսակի հանձնման ավանդույթը վերականգնվել է 2004 թվականի ամառային Օլիմպիական խաղերում՝ Աթենքում՝ Հունաստան:

Հրավառություն

Օլիմպիական հրավառությունը հանդիսանում է հռոմեական հրավառության տարատեսակ, բայց ձեռքերը բարձրացնում են ավելի վեր:

Այս ողջույնի ձևը օգտագործվել է 1924 թվականին Փարիզի և 1936 թվականին Բեռլինի օլիմպիական խաղերի ժամանակ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, հաշվի առնելով մեծ նմանությունը նացիզմի հրավառության հետ, այն չի օգտագործվել՝ չնայած այն պաշտոնապես արգելված չի եղել:

Թալիսմաններ

Օլիմպիադաների ժամանակ յուրաքանչյուր երկիր թալիսմանը ընտրում է իր հայեցողությամբ: Սովորաբար թալիսմաններ ընտրում են որոշ կենդանեիների կամ այլ ոճավորված պատկերներ, որը արտացոլում է հյուրընկալող երկրի մարդկանց մեծամասնության կարծիքի հետ:

Սկզբնական շրջանում Օլիմպիական խաղերի ժամանակ միայն խորհրդանիշն էր դրոշը: Թալիսմանները վերջին ժամանակահատվածում են ի հայտ եկել՝ 1968 թվականին:

Խաղերի էմբլեմա

Յուրաքանչյուր օլիմպիական խաղերն ունեն յուրահատուկ էմբլեմա, որը խորհրդանշում է և' քաղաք, և' ընդունող երկիր:

Սովորաբար, բայց ոչ միշտ է, որ էմբլեմայի տարրերը համարվում է օլիմպիական օղակները:

Պաշտոնական Օլիմպիական Էմբլեման բաղկացած է օլիմպիական կարգախոսից. Խորհրդանիշը դա հինգ միահյուսված գունավոր օղակներ են սպիտակ

ֆոնի վրա, իսկ պաշտոնական կարգախոսը GITIUS, ALTIUS, FORTIUS, որը լատիներենից թարգմանվում է «Արագ, Բարձր, Ուժեղ», որը վերջին խաղերի ժամանակ փոխվել է կամ կարելի է ասել ոչ պաշտոնական՝ հնարել է մեկ ուրիշը: Օլիմպիական էմբլեմայի օգտագործման իրավունքը միայն ՄՕԿ-ին և ԱՕԿ-ին է: Ազգային օլիմպիական կոմիտեները ամեն անգամ ունեցել են իրենց սեփականը:

Հայերի մասնակցությունը ժամանակակից Օլիմպիական խաղերին

Հայերից առաջին անգամ ժամանակակից օլիմպիական խաղերին մասնակցել են 1912 թվականինին 5-րդ օլիմպիական խաղերին Ստոլկհոլմ, Շվեդիա: Հենց այդ նույն տարում էլ կրկին առաջին անգամ Օլիմպիադայում հանդես է եկել Օսմանյան կայսրությունը, որը ներկայացրել են թեթև աթլետներ Վահրամ Փափազյանը ու Մկրտիչ Մկրյանը:

Սոտլկհոլմի Օլիմպիական խաղերին մասնակցեց 28 երկրների 2406 մարզիկ, որոնք պայքարեցին 14 մարզաձևերում: Վահրամ Փափազայանը ելույթ ունեցավ 800 մ ու 1500 մ վազքում, իսկ Մկրտիչ Մկրյանը՝ աջ և ձախ ձեռքերով գնդի, սկավառակի նետում մարզաձևերում, հնգամարտում և տասնամարտում:

Մկրտիչ Մկրյանը բավական հաջող էր մասնակցել ու հասել կիսաեզրափակիչ: Մասնակցելով ատլետիկայի 5 ձևերում՝ նա ռեկորդ է սահմանել ու դարձել Թուրքիան ներկայացրած միակ մարզիկը, ով այդքան մարզաձևերում է հանդես եկել Լավ է ելույթ ունեցել նաև Վահրամ Փափազյանը, որի մասին տարիներ անց գրել է նրա թոռը.

«Պապիկս պատմել է, որ մրցման ժամանակ, երբ արդեն հասնելիս է եղել վերջնագծին ու 20 մետր առաջ է եղել մրցակիցներից, դանդաղեցրել է վազքն ու հայտնվել հետնապահների թվում: Նա չի ցանկացել, որ Օլիմպիական խաղերում Թուրքիային մեդալ նվիրի»:

Բարեբախտաբար, երկու օլիմպիականներն էլ կարողացել են փրկվել Հայոց մեծ եղեռնի ժամանակ: Փափազյանը հաստատվել է Բեյրությում, ապա ընտանիքով տեղափոխվել ԱՄՆ: Մկրյանի հետագա գործունեության մասին ոչինչ հայտնի չէ:

/Հասմիկ Բաբայան/

Հայաստանի մարզիկները ժամանակակից Օլիմպիական խաղերին մասնակցում են 1952 թվականից՝ 15-րդ խաղերից:

1952 թ. Հելսինկի, Ֆինլանդիա 2 մարզիկ:

Այս խաղերում բավականին հաջող հանդես եկավ մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը, որը միանգամից մեդալի արժանացավ, որոնցից 2-ը՝ ոսկե: Շահինյանը նաև ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձավ օլիմպիական չեմպիոն, ապա հաջողության հասավ նաև անհատական պայքարում: Հանդես գալով օղակներում, բազմամարտում, նժույգում և զուգափայտում, Հրանտ Շահինյանը դարձավ առաջին հայ մարզիկը, որը օլիմպիական խաղերում ոսկու է արժանանանում: Ժամանակակից հնգամարտում հանդես եկավ Իգոր Նովիկովը, որը բավարարվեց 4-րդ հորիզոնականով:



1956թ. Մելբուրն, Ավստրալիա 3 մարզիկ:

Այստեղ փայլեց Հայաստանի 20-րդ դարի լավագույն մարզիկ Ալբերտ Ազարյանը, որը 1 ոսկե մեդալ նվաճեց անհատական պայքարում օղակների վրա, ևս մեկ ոսկու արժանացավ թիմային պայքարում:

Ոսկե մեդալի արժանացավ նաև բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը, որը հանդես էր գալիս 63,5 քաշային կարգում:

Իգոր Նովիկովը ևս դարձավ չեմպիոն, սակայն թիմային պայքարում:

1960թ. Հռոմ, Իտալիա 5 մարզիկ:

Մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը կրկի դարձավ չոմպիոն՝ նվաճելով իր 3-րդ ոսկին օլիմպիական խաղերում: Թիմային պայքարում Ազարյանը արծաթի արժանացավ: Խորհրդային Հայաստանը ներկայացնող Վալենտին Չեռնիկովը այս խաղերում Բրոնզի արժանացավ, իսկ Իգոր Նովիկովը թիմային պայքարում նվաճեց արծաթե մեդալ:

1964թ. Տոկիո, Ճապոնիա, 1 մարզիկ

Այս խաղերին մասնակցեց միայն Իգոր Նովիկովը: Ժամանակակից հնգամարտում հանդես եկող այս մարզիկը անհատական պայքարում արծաթե մեդալ նվաճեց, իսկ թիմային պայքարում՝ ոսկե:

1968թ. Մեխիկո, Մեքսիկա, 1 մարզիկ:

Մեքսիկա մեկնեց միայն ազատ ոճային ըմբիշտ Նազար Ալբարյանը, որը գրավեց 4-րդ հորիզոնականը 52 կգ քաշային պայքարում:

1972թ. Մյունխեն, Գերմանիա, 6 մարզիկ

Աթլետիկայում հանդես եկող Ֆաինա Մելնիկը դարձավ օլիմպիական խաղերում ոսկե մեդալի արժանացած առաջին հայաստանցի մարզուհին Մյունխենում առաջին անգամ օլիմպիական խաղերին մասնակցեցին նաև հայ ֆուտբոլիստները: Արկադի Անդրեասյանը և Հովհաննես Զանազանյանը ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձան բրոնզե մեդալակիրներ: Սպորտային մարմնամարզությունում Էդվարդ Միքաելյանը թիմային պայքարում արծաթե մեդալ նվաճեց:

1976թ. Մոնրեալ, Կանադա, 4 մարզիկ

78 կգ քաշային ծանրամարտիկ վարդան Միլիտոնյանը դարձավ օլիմպիական խաղերի փոխչեմպիոն՝ նվաճելով արծաթե մեդալ:

Բռնցքամարտիկ Դավիթ Թորոսյանը 51 կգ. Քաշայինների պայքարում արժանացավ բրոնզի:

1980թ. Մոսկվա, ԽՍՀՄ , 11 մարզիկ

82,5կգ քաշային կարգում ծանրորդ Յուրի Վարդանյանը դարձավ օլիմպիական չեմպիոն՝ սահմանելով նաև նոր ռեկորդ:

Ալբերտ Ազարյանի որդին՝ Էդուարդ Ազարյանը, սպորտային մարմնամարզություն թիմային պայքարում նվաճեց ոսկի:

Ջրացատկում Սիլվա Էմիրզյանը նվաճեց արծաթե և բրոնզե մեդալ:

Ֆուտբոլում Խորեն Հովհաննիսյանը ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձավ բրոնզե մեդալակիր:

Մականախաղում նման հաջողության հասավ Սոս Հայրապետյանը, իսկ սուսերամարտում Աշոտ Կարագյանը, որը թիմային պայքարում բացի բրոնզից, նաև արծաթի արժանացավ:

1984թ. Լոս Անջելես, ԱՄՆ

ԽՍՀՄ հավաքականը այս խաղերը բոյկոտեց, չմասնակցելով Միացյալ Նահանգներում կայացված մրցումներին: Բնականաբար, օլիմպիական խաղերից դուրս մնացին նաև հայ մարզիկները:

1988թ. Սեուլ, Կորեա, 8 մարզիկ



56կգ քաշային ծանրորդ Օգսեն Միրզոյանը դարձավ օլիմպիական չեմպիոն դարձած 2-րդ հայ ծանրորդը:

Հունահռոմեական ոճի ըմբիշ Լևոն Ջուլֆալակյանը, 68 կգ քաշայիննների պայքարում նվաճեց ոսկե մեդալ: Ազատ ոճային Ստեփան Սարգսյանը 62կգ քաշայիններ պայքարում դարձավ արծաթե մեդալակիր:

1992թ. Բարսելոնա, Իսպանիա, 5 մարզիկ

Փլուզված ԽՍՀՄ-ի մարզիկները այստեղ հանդես եկան որպես ԱՊՀ-ի ներկայացուցիչները: Հայաստանի մարզիկները պարզապես փայլեցին այս խաղերում:

Ծանրամարտում օլիմպիական չեմպիոն դարձավ Իսրայել Միլիտոսյանը:

Հունահռոմեկանա ոճում չեմպիոնի կոչման արժանացավ 74 կգ քաշային Մնացական Իսկանդարյանը:

Հրաձիգ Հրաչյա Պետիկյանը ևս դարձավ ոսկե մեդալակիր: 3 օլիմպիական չեմպիոն մեկ խաղերում. Սա բացառիկ արդյունք էր: Ցավալի է միայն, որ այս մարզիկները հանդես չէին գալիս արդեն անկախություն ձեռք բերած Հայաստանի դրոշի ներքո:

1996թ. Ատլանտա, ԱՄՆ, 32 մարզիկ:

Առաջին անգամ հայ մարզիկները հանդես էին գալիս Հայաստանի դրոշի ներքո: Միացյալ Նահանգներ էին մեկնել միանգամից 32 մարզիկներ, որը ռեկորդային ցուցանիշ է և դեռ չի գերազանցվել: ընդհանուր առմամբ՝ հայ մարզիկները վատ հանդես չեկան՝ նվաճելով 1 ոսկե և 1 արծաթե մեդալներ:

Հունահռոմեկան ոճի ըմբիշ Արմեն Նազարյանը 52 կգ քաշային կարգում դարձավ օլիմպիական չեմպիոն, իսկ ազատ ոճային Արմեն Մկրտչյանը 48կգ քաշային կարգում արժանացավ արծաթե մեդալի:

2000թ. Սիդնեյ, Ավստրալիա, 25 մարզիկ

Այս խաղերում Հայաստանը ընդամենը 1 բրոնզով բավարարվեց: Ծանրորդ Արսեն Մելիքյանը 77 կգ քաշային կարգում գրավեց 3-րդ հորիզոնականը:

2004 թ. Աթենք, Հունաստան, 18 մարզիկ

Այս խաղերում հայ մարիզկներին որևէ մեդալի չհաջողվեց արժանանալ: հաջողությանը մոտ էին ծանրորդ Գևորգ Ալեքսնայանը և հրաձիգ Նորարյ Բախտամյանը, որոնք գրավեցին 4-րդ հորիզոնականը:

2016թ. Ռիո դե Ժանեիրո, Բրազիլիա

97 կգ քաշային կարգում հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը դարձավ օլիմպիական չոմպիոն, իսկ 2020 թ. Ռիոյի Օլիմպիական խաղերին աշխարհի եռակի և Եվրոպայի հնգակի չեմպիոն: Արթուր Ալեքսանյանը 97 կգ

քաշային կարգում արծաթե մեդալ է նվաճում Տոկիոյում՝ Ճապոնիայում ընթացքող 32—րդ ամառային Օլիմպիական խաղերում:

Հայաստանի մարզիկները բազմիցս արժանացել են տարբեր ժամանակների ամառային Օլիմպիական խաղերի արծաթե և բրոնզե մեդալների:

Հայաստանի 14 մարզիկներ դարձել են Ամառային օլիմպիական խաղերի չեմպիոններ՝ բարձր պահելով Հայստանի և հայ մարզիկների փառքն ու պատիվը:

Ժամանակակից Օլիմպիական խաղերը տևում են 17 օր:

Մեր օրերում օլիպիական խաղերը դարձել են սպորտի իսկական տոնակատարություններ: դրանց մասնակցում են աշխարհի երկրների մեծ մասի

լավագույն մարզիկները:

Օլիմպիական խաղերին իրավունք ունեն մասնակցելու ՄՕԿ-ի անդա, երկրները:

Օլիմպիական խաղերին մասնակցում են այն մարզիկները, որոնք ձեռք են բերում օլիմպիական խաղերի վարկանիշ /ռեյտնինգ/:

Օլիպիական խաղերը մարդասիրական բնույթ են կրում և խաղաղության գրավական են:

Օլիմպիադա նշանակում է՝ սպորտային, գեռարվեստական և այլ միջոցառումներ:

Ամենախոշոր և նշանավոր մարզական մրցումները կազմակերպվում էին Օլիմպիա քաղաքում՝ Հունաստան, որոնք և ստացան «Օլիմպիական խաղեր» անվանումը:

ՄՕԿ-ի գրասենյակը և թանգարանը գտնվում են լոզանում՝ «Շվեցարիա»

Օգտագործված գրականության ցանկ

1. Համացանց /ինտերնետ/
2. Հայաստան-Վիքիպեդիա /wikipedia.org/
3. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան
4. www.armroc.am
5. www.armtimes.com
6. www.armedia.am
7. www.armsport.am

Եզրակացություն

Մանկավարժական գործունեությունը մարդկային աշխատանքի ամենադժվար բնագավառներից մեկն է: Այն հաջողությամբ կատարելու համար միայն առարկան իմանալը նույնիսկ ամենախորը կերպով՝ բավական չէ: Անհրաժեշտ է կատարելապես տիրապետել երիտասարդության դաստիարակության տեսությանը և մեթոդիկային: Առավել ևս, դժվար է ֆիզիկական կուլտուրայի դասաժամերի կազմակերպումը՝ ըստ մեթոդիկայի: Քանի որ ֆիզիկական կուլտուրան, ի տարբերություն մյուս առարկաների, պետք է ունենա տվյալ կրթօջախում բարձր հեղինակության, ծառայի մարդկանց համար՝ որպես կենսունակության պահպանման միջոց՝ ինչպես ջուրը և հացը:

Կրթօջախում պետք է ֆիզիկական կուլտուրա առարկան լինի կարևոր առարկաներից մեկը, և յուրաքանչյուր ծնող առաջին հերթին պետք է մտահոգվի իր երեխայի ֆիզիկական դաստիարակության հարցով:

Գրեթե բոլոր դպրոցներում զգացվում է սպորտային սարքավորումների, գույքի պակաս: Քիչ է նաև հայերեն գրականությունը ֆիզիկական կուլտուրա առարկայի վերաբերյալ: Երբ մարդը քաղցած է լինում, զգում է դրա պահանջը և իսկույն լրացնում է: Պետք է ասել, որ մարդու մկաններում նույնապես առաջանում է շարժվելու մկանային քաղց, որի մասին մենք հաճախ մոռանում ենք: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դպրոցների մարզադահլիճները ջեռուցելու, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

Զեկույց

Օլիմպիական խաղերը և խարտիան մեծ դեր են խաղում անձի և մատաղ սերնդի հոգևոր և ֆիզիկական, բարոյահոգեբանական դաստիարակմանը: օլիմպիական խաղերը դեռ անտիկ դարաշրջանից իր մեջ ներառել է առաջնահերթ՝ խաղաղություն, բարեկամության, անձի ֆիզիկական և բարոյական ձևավորում: Հին ժամանակներում խաղերից առաջ դադարեցվում էին պատերազմները, պահպանվում էր Սրբազան խաղաղություն, որը չպահպանվեց մեր ժամանակներում: Օլիմպիական խաղերը ունեն մի քանի, սակայն, շատ կարևոր ավանդույթներ՝ նպատակ, կանոնակարգ /խարտիա/, փաստաթուղթ, դրոշ և խորհրդանիշ, ՄՕԿ-ի կանոնադրություն, օրհներգ, երդում, նշանաբան և կարգախոս, բացման և փակման արարողություններ և մի շարք սովորույթներ, հրավառություն:

Հին Օլիմպիական խաղերը տեղի են ունեցել Հին Հունաստանի Պելեպոսնեսի Օլիմպիա քաղաքում Զևսի տաճարի և արձանի մոտ մի սրբավայրում /հարթավայրում/, որը Հերակլեսը Աթենաս-Պալաս դիցուհուն նվիրված ձիթենիների պուրակ էր ստեղծել: Առաջին օլիմպիական խաղերը տեղի են ունեցել մ.թ.ա. կամ ք.ա. 8-րդ դար 776 թվականին: օլիմպիական խաղերը նվիրված էին հույն 12 հեթանոս Աստվածներին: Անտիկ ժամանակների օլիմպիական խաղերին հայոց արքաներ ՝ Տրդատ I, առաջինն է մասկացել հին օլիմպիական խաղերին՝ քառաձի մարտակարգ վազքերում ավելի քան 2000 տարի առաջ:

Տրդատ III /Մեծ/ մ.թ. 3-րդ դար 281թ. 265-րդ օլիմպիական խաղեր՝ ըմբշամարտ ձևից դարձել է չեմպիոն:

Վարազդատ Արշակունի թագավորը 104 տարի անց մ.թ. 4-րդ դար 385թ. 291-րդ օլիմպիական խաղեր՝ բռնցքամարտ /կռփամարտ/ դարձել է Հայաստանի առաջին օլիմպիական չեմպիոնը:

Անտիկ օլիմպիական խաղերը դադարեցվեց Հռոմի կայսեր Թեոդիոս I հրովարտակով որպես քրիստոնեությանը անհամատեղելի երևույթ և ավելի քան 15 դար մոռացության մատնվեցին օլիմպիական խաղերը:

Հին Հունական օլիմպիական խաղերի գաղափարների լայն տարածման համար՝ իբրև երիտասարդության ֆիզիկական դաստիարակության մոդելի, նպաստեցին հին Օլիմպիայի հնագիտական պեղումների արդյունքները:

Առաջին պեղումները Օլիմպիայում անցկացրեցին ֆրանսիայի հնագետները՝ 1831-1834 թվականներին:

19-րդ դարում՝ գլխավորապես 1875-1881 թվականներին, Օլիմպիայի վայրում կատարված պեղումներն են մաիյն, որ մեզ հնարավորություն են տվել ստույգ պատկերացում կազմել երբեմնի Օլիմպիայի և Օլիմպիական խաղերի մասին:

1894 թվականին հունիսի 16-23-ին Փարիզի /Ֆրանսիայի/ Սորբոնի համալսարանում տեղի ունեցած հանրագումարում, որը նվիրված էր նաև անձի ֆիզիկական զարգացմանը, Պիեռ դե կուբերտենի առաջարկությամբ վերջին օրը հունիսի 23-ին ստեղծվեց Միջազգային Օլիմպիական Կոմիտեն/ՄՕԿ/:

Առաջին ժամանակակից օլիմպիական խաղերը անցկացվեցին 19-րդ դարի 1896թվականին՝ Հունաստանի մայրաքաղաք Աթենքում:

Ժամանակակից օլիմպիական խաղերը բաժանված են 2 մասին՝ ամառային և ձմեռային:

Հայ և հայաստանցի շատ մարզիկներ մասնակցել են այդ խաղերին՝ դարձել օլիմպիական չեմպիոններ, արծաթե և բրոնզե մեդալակիրենր: 14 մարզիկ, սկսած 1952 թվականին 15-րդ ամառային օլիմպիական խաղերից մինչև մեր օրերը, նվաճել են Օլիմպիական բարձունքը, չեմպիոնի կոչման են արժանացել:

Օլիմպիական օղակները 5-են՝ խորհրդանշում են 5 մայրցամաքների միացումը, իսկ դրոշը ունի սպիտակ գույն պատկերված 5 միահյուսված օղակներով:

ՄՕԿ-ը Օլիմպիական մարմին է, գրասենյակը և թանգարանը գտնվում են Լոզանում՝ Շվեցարիայում:

Օլիմպիական խաղերը ունեն նաև իրենց նշանաբանը՝ GITIUS, ALTIUS, FORTUS: Նշանակում է լատիներենից թարգմանվաբար արագ, բարձր, ուժեղ:

Օլիմպիական շարժման նպատակերից է նաև չճանաչել թշնամուն, ստեղծել ազգերի միջև բարեկամություն, համերաշխություն:

Օլիմպիական շարժումը խաղաղության և առողջության գրավականն է՝ «Առողջ մարմնում առողջ հոգի» /Ռեֆլեր/:

Օլիմպիական խաղերը իրենցից ներկայացնում են մարդասիրական բնույթ և առողջ ապրելակերպ:

Օլիմպիական խաղերում մեծ տեղ են տալիս էթիկային: Սպորտային էթիկան հասարակակն այն չափանիշներից է, որի իրականացման համար պայքարել ու պայքարում են սպորտի շատ հիմնադիրներ, ղեկավարներ: կարևորը՝ հիմք ընդունել ազգային իրավահավասարությունը:

Սպորտային էթիկան հասարակական գիտակցության բարոյական ձևի դրսևորում է:

Բարոյականության և զսպվածության վերաբերյալ Պլատոնն ասել է.

«Չկա ավելի մեծ մի հաղթանակ, քան հաղթանակը հենց քո նկատմամբ»:

Կուզենայի իմ զեկույը ավարտել շատ կարևոր մի կարգախոսով՝ Շոպեն Հաուրերի թևավոր խոսքերով. «Առողջությունը ամեն ինչ չէ, բայց ամեն ինչ ոչինչ է, եթե չկա առողջությունը»:

Թող լինի միջոշ խաղաղություն,

Չլինեն երբեք պատերազմներ

Տեր Աստված:

Եզրակացություն

Մանկավարժական գործունեությունը մարդկային աշխատանքի ամենադժվար բնագավառներից մեկն է: Այն հաջողությամբ կատարելու համար միայն առարկան իմանալը նույնիսկ ամենախորը կերպով՝ բավական չէ: Անհրաժեշտ է կատարելապես տիրապետել երիտասարդության դաստիարակության տեսությանը և մեթոդիկային: Առավել ևս, դժվար է ֆիզիկական կուլտուրայի դասաժամերի կազմակերպումը՝ ըստ մեթոդիկայի: Քանի որ ֆիզիկական կուլտուրան, ի տարբերություն մյուս առարկաների, պետք է ունենա տվյալ կրթօջախում բարձր հեղինակության, ծառայի մարդկանց համար՝ որպես կենսունակության պահպանման միջոց՝ ինչպես ջուրը և հացը:

Կրթօջախում պետք է ֆիզիկական կուլտուրա առարկան լինի կարևոր առարկաներից մեկը, և յուրաքանչյուր ծնող առաջին հերթին պետք է մտահոգվի իր երեխայի ֆիզիկական դաստիարակության հարցով:

Գրեթե բոլոր դպրոցներում զգացվում է սպորտային սարքավորումների, գույքի պակաս: Քիչ է նաև հայերեն գրականությունը ֆիզիկական կուլտուրա առարկայի վերաբերյալ: Երբ մարդը քաղցած է լինում, զգում է դրա պահանջը և իսկույն լրացնում է: Պետք է ասել, որ մարդու մկաններում նույնապես առաջանում է շարժվելու մկանային քաղց, որի մասին մենք հաճախ մոռանում ենք: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դպրոցների մարզադահլիճները ջեռուցելու, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար: